ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— հուլիսի 2023 թվականի №—Ա

«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հունիսի 1-ի գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ 2015 թվականի հոկտեմբերի 25-ին Ընկերության մասնակիցների փոփոխության վերաբերյալ, ըստ որի՝ Ընկերության մասնակից Գոռ Գրիգորյանն իրեն պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը որպես նվիրատվություն հանձնել է Էլիզաբետ Սինանյանին, իսկ 2023 թվականի հուլիսի 13-ի գրությամբ՝ Հայտում նշված բաժնեմասի նվիրատվության պայմանագիրը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 19-ի № ՍՇ/34.2-Մ2-8/2010-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը 2023 թվականի հուլիսի 11-ի №01/11.1/6742-2023 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում Հայտի վերաբերյալ առարկություններ չունի, կից ներկայացնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումն առ այն, որ վերջինս դրա վերաբերյալ

ազգային անվտանգությանը կամ պետական շահին վնասելու տեսանկյունից առաջարկություններ չունի,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը բացակայում են: Պարզվել է նաև, որ Հայտով նշված գործարքը Ընկերության կողմից կնքվել է Օրենքի 14-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց Հանձնաժողովի նախնական համաձայնության, ինչով պայմանավորված այն օրենքի համաձայն անվավեր է: Միաժամանակ, մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ընդունումը Ընկերությունը վերացրել է նշված խախտումը՝ ներկայացնելով Հայտն ու դրանում նշված բաժնեմասի նվիրատվության պայմանագիրը, և խախտման հետևանքով չի վտանգվել ու չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, դա ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, առկա չէ խախտման կատարման կրկնակիություն և Ընկերությունը նախկինում նման խախտում թույլ չի տվել, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Հայտով նշված գործարքին:
2. Ընդունել ի գիտություն, որ Հայտում նշված՝ 2015 թվականի հոկտեմբերի 25-ին Ընկերության մասնակիցների փոփոխության՝ Ընկերության մասնակից Գոռ Գրիգորյանին պատկանող՝ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնեմասը Էլիզաբետ Սինանյանին որպես նվիրատվություն հանձնելու գործարքը կնքման պահից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում օրենքի համաձայն անվավեր է:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2023թ.